

ՌԻՄԱԿԱԶԱՐՈՒՄԸ, ՌԻՄԱԿԱԿՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԽԻՂՃԸ

Posted on October 30, 2020 by Keghart



Category: [Opinions](#)



Մովսես Ծիրանի, Լիբանան, 20 Հոկտեմբեր 2020

**Քառսի մեջն իսկ ելք կայ ...
Սուն Յու**

Ի տես մարդու անասնական բնազդներուն յագուրդ տուող վայրագութիւններուն, բարի նպատակներով տինամիթի ուժանակը ստեղծած ըլլալուն համար Ալֆրետ Նոպէլը զոչաց ու *խղճի խայթ* ունեցաւ: Ան իր ակամայ գործած «մեղքը» քաւելու համար, համապատասխան մրցանակներ ստեղծեց յանուն մարդու բարօրութեան ու աշխարհի խաղաղութեան:

Այն բոլոր պատերազմները, մարդկային խժոժութիւններն ու ակերները, որոնք տեղի կ'ունենան մարդասիրական գաղափարներու վահանի ներքոյ, ծրագրուած ու մտածուած ձեւով կը գործադրուին ամենայն սառնասրտութեամբ եւ առանց դոյզն խղճի խայթի:

Բացի Նոպէլէն, մեզի ծանօթ չէ գիտնականի կամ ընկերութեան անուն մը, որ կործանիչ զէնքեր ստեղծելէ ու արտադրելէ ետք խղճի խայթ ունենայ ու հետեւի Նոպէլի օրինակին:

Խիղճ եւ այն ալ *խղճի խայթ*: Սկեպտիկ մը պիտի ըսեր որ «ո՞վ կորսնցուցեր է *խիղճ* ըսուածը եւ դուք, այս դժնդակ օրերուն կը փնտռեք զայն ամօթահար Պէյրուքի ակերակներուն մէջ եւ կամ Արցախի խրոխտ լեռներուն վրայ: Միայն թէ յանկարծ չըսեք թէ -«*խիղճը*» *ինքը հաւատքն է, ան մեր մէջ է, կայ ու կը մարդկայնացնէ մեզ:*

Ինքն իր կեանքի բարելաւման ու բարօրութեան համար ի՞նչ ուժ որ ստեղծած եւ կամ զէնք շինած է մարդ արարածը, այդ բոլորը գործածած է նաեւ ինքն իր դէմ, ինքն իր տեսակն ու իր ստեղծած մշակոյթն իսկ ոչնչացնելու համար:

Հիրոշիմայէն ու Նակագաքիէն ետք, իր ուժգնութեամբ երրորդ մեծագոյն ռումբը պայթեցաւ Պէյրուքի նաւահանգիստին մէջ ու ակերեց քաղաքն ու արուարձանները, անգամ մը եւս ակերելով՝ արդէն իսկ բզկտուած քաղաքացիներու հոգեկան աշխարհն ու կորովը: Ո՛չ ոք գիտցաւ, ոչ ոք գիտէ եւ ոչ ալ որեւէ յոյս կայ որ ապագային ուրիշ մէկը գիտնայ թէ ինչո՞ւ ըրին, ո՞վ ըրաւ եւ կամ ի՞նչ նպատակով, ո՞վ թելադրեց որ ընեն: ՄԵկ բան յստակ է միայն, թէ ըրին առանց խղճի խայթի: Ի՞նչ տեսակ խիղճի մասին կրնայ ըլլալ խօսքը, երբ վերջին տասնամեակներուն հարիւրաւոր ականուած ինքնաշարժներ պայթեցան ու հազարաւոր անմեղ քաղաքացիներ զոհուեցան ըլլայ Լիբանանի թէ Լիբանանի տարածքէն դուրս: Յանուն ո՞ր մէկ սրբազան նպատակի, ո՞ր մէկ մարդկային գաղափարախօսութիւն իրագործելու, կամ որո՞ւն հայրենիքն ու կեանքը պաշտպանելու համար:

Առաջին ու երկրորդ համաշխարհային պատերազմներէն ետք ամենադժնդակ ու ամենաանհաւասար մարտերէն մէկը տեղի կ'ունենայ մեր օրերուն՝ ազատատենչ Արցախի մէջ: Նախայարձակ թշնամին, ակելի ճիճի թշնամիները (չորս տարբեր

արհաւիրք, անապահովութիւն, տնտեսական ահազնացող ճգնաժամ, մահաբեր համաճարակ, ապագայի անորոշութիւն, հազարաւոր զոհեր, վիրաւորներ ու յանպատրաստից տնանկներ, բազմաթիւ հիւանդանոցներու եւ այլ հանրային կառոյցներու քանդում, հետեւաբար նաեւ՝ համատարած գործազրկութիւն, ծայրահեղ թշուառութիւն, ահաւոր ընկճախտ ու... մասամբ նորին: Փոխանակ այս բոլորի դրդապատճառը հանդիսացող «ղեկավարները» դժոխք դրկելու, անոնք խիղճ ըսուածը մէկ կողմ դրած՝ Պէյրութը վերածեցին դժոխքի: Արցախը եւս կը փորձեն վերածել դժոխքի: Ստեղծուած իրավիճակի տպաւորութիւնը այն է, որ մենք Արցախի մէջ անգամ մը եւս ոտքի կոխան կրնանք ըլլալ ի հաշիւ մեծապետական սակարկութիւններու ու կողմնակի շահերու: Թող լաւ իմանան, սակայն որ դարաւոր մեր պատմական փորձառութիւններն ու փորձութիւնները թրծած ու ջրդեղած են մեր ազգային գիտակցութիւնը, մենք միասնական ենք դարձեալ, ու Արցախը Հայաստան է, Դրախտավայր, Սուրբ Աւետարանի անբեկանելի վկայութեամբ իսկ: Արցախը բնակուած բնիկ հայերով, կը մնայ «սրբօրէն բեղուն» դրախտավայր ու երբեք դժոխքի չի վերածուիր...:

Իբրեւ թէ խղճահարութենէ դրդուած՝ աշխարհը պատրաստ է օգնելու թէ՛ Լիբանանին եւ թէ՛ Արցախին: Արցախահայութիւնը ինքը, իր անձուկ պայմաններով իսկ թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս նեցուկ կանգնեցաւ Լիբանանահայութեան: Լիբանանահայութիւնը իր հերթին նիւթաբարոյական օգնութեան զուգահեռ, արեամբ եւս կը շարունակէ զօրակցիլ Արցախին:

Իսկ անոնք որոնք Լիբանանն ու Հայաստանը կողոպտեցին (ոմանք դեռեւս կը շարունակեն լկտիաբար...) ու այս վիճակին հասցուցին, անոնցմէ շատեր կը յաւակնին մարդասիրական ու հայրենասիրական ճառեր արտասանել, առանց սակայն մատը մատի վրայ դնելու ու նիւթաբարոյական ձեռք երկարելու երկրին ու ժողովուրդին: Այն ժողովուրդին, որ իր ու հայրենիքի ճակատագիրը վստահեցաւ իրենց:

Ինչպէս բոլոր ժողովուրդները, մենք եւս ունինք ազգային թերութիւններ, սակայն մեր գլխաւոր թերութիւնը անմիաբանութիւնը չէ, ինչպէս շատեր կը կարծեն, այլ մեր *խիստ մարդկային նկարագիրն* է դրսեւորուած մեր պատմութեան ողջ երկայնքին: Մենք այլեւս նախկին ազնիւ, ներողամիտ ու յանցաւոր ըլլալու չափ բարի Սասունցի Դաւիթը չենք, սկսած ենք շարժիլ ու գործել անելի տրամաբանութեամբ քան՝ զգացումով: Այլ այն Սասունցի Դաւիթն ենք, որուն «պոչին կոխած են» արդէն ու վիրաւորած անոր մարդկային ինքնասիրութիւնն ու ազգային արժանապատուութիւնը: Վա՛յ անոր, որ կը համարձակի ու կը փորձէ վիրաւորել ու աղաւաղել գլխագիր Մարդու գլխագիր **ԷՈՒԹԻԲՆԸ**: Մարդը անասունէն զանազանող գերագոյն այն արժէքը, որ աճեռնմխելի ու անհալելի է նոյնիսկ: Այս պարագային Սասունցի այդ «անփորձ» պատանին յանկարծ կը կերպարանափոխուի ու կը դառնայ ազսպելի կատաղած առիւծ, ընդունակ

անհաւասար կռիւի ու պատրաստ՝ անխնայօրէն ոչնչացնելու գթութենէ ու մարդկային յատկութիւններէ պարպուած թշնամիները...:

Ահաւասիկ թէ ինչու մեր թշնամիները դարձեալ յուսախաբ պիտի ըլլան, որովհետեւ մենք Սասունցի Դաւիթ ենք ի վերջոյ... ու մեր «պոչին» կոխած են արդէն: Այդ պատճառով ալ մենք հօգօր ենք ու կը շարունակենք կռուիլ անթիւ ու անհամար զօրքերու ու կատարելագործուած ու նորագոյն զինատեսակներու դէմ: Տարբերութիւնը այն է որ մենք կը կռուինք յանուն մեր հայրենիքի ու ազգային մշակոյթի պաշտպանութեան. իսկ թշնամիները կը յաւակնին ուրիշի երկիրը գրաւելու, թալանելու ու նոյնի՛սկ մեր դեռատի աղջիկները բռնաբարելու խենեշային ակնկալութեամբ:

Հայաստանն ու առհասարակ Կովկասը քառսի վերածելու նկրտումները արդէն նշմարելի են եւ հնարաւորութիւնները չեն պակսիր: Այնուամենայնիւ սակայն **«Քառսի մեջն իսկ ելք կայ...»** կ'ըսէ մեզմէ երկու հազար եւ անելի տարիներ առաջ ապրած Զին իմաստասէր՝ Սուն Տուն իր «Պատերազմի Արուեստը» գիրքին մէջ:

Առաջին անգամը չէ որ Հայաստանն ու տարածաշրջանը քառսի վերածուած է: Ներկայ կացութենէն շատ անելի վատ պատմական վիճակներ դիմագրաւած ենք ԵԼԲ-ը գտած ու փաստօրէն գոյատեւած ու հասած ենք ներկայ հագրուանին: Վստահ եղէք որ այս քառսային Կացութեան ԵԼԲ-ն ալ կը գտնենք: Ու Փառքով կ'օծենք մեր փառապանծ հերոսներու ճակատը:

Ի վերջոյ մենք այն ազգն ենք, որ չորս հազար եւ անելի տարիներ առաջ, (դուք կրնաք ըսել Նոյ Նահապետէն ի վեր) կազմաւորուած, ծլած ու ծաղկած է նոյն տարածաշրջանի՝ Հայաստան Աշխարհէն ներս. ու հակառակ անոր որ դարերու ընթացքին միշտ յաւելեալ արիւն տուած ու երբեմն նաեւ հեղած օտար ափերու վրայ, կրցած է տոկալ (իր ժամանակակիցները ու՞ր են այսօր) ու կը շարունակէ գոյատեւել իր բնօրրանի՝ արմատական ու միակ հայրենի հողի վրայ: Այսօր անասնական բնազդներէն տակաւին չձերբագատուած, վաչկատուն հորդաներ եկած են վտանգելու մեր ինքնութիւնն ու աներելու մեր երկիրը: Անոնք ի սկզբանէ ձախողած են արդէն ու ինչպէս անցեալին այսօր եւս մեր կենսատու արիւնը կը հեղուի մեր սրբազան հողին վրայ գիտակցաբար, այն վաւերական համոզումով որ թափուած արիւնը կենսատու աւիշ է մեզի համար: Կասկածէ վեր է որ դարձեալ պիտի շարունակենք շէնացնել մեր երկիրը, զարգացնել մեր մշակոյթն ու միաժամանակ նպաստել նաեւ համամարդկային ոգեղէն արժէքներու բարձրացման ու տարածման, ինչպէս ըրած ենք պատմութեան ողջ ընթացքին:

Այո՛, աշխարհը, յատկապէս մեր թշնամիները պարտական են Հայ ազգին եւ պարտական ալ կը մնան:

There are no comments yet.